




ՄԵԻԹԱՐ ԱՐԲԱՀԱՅՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ
ՄԱՀՈՒԱՆ 250-ԱՄԵԱԿ
1749-1999

ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ



250 ԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆ
ՄԵԾՆ ՄԻԻԹԱՐ ՄԵԲԱՍՏԱՅԻՒ ՄԱՀՈՒԱՆ
27 ԱՊՐԻԼ 1999

Աշխարհիս չորս ծագերուն ցրուած, գործօն ու նուիրեալ Մխիթարեան միաբան հայրեր, ինչպէս նաեւ անոնց տարած դարատր անգնահատելի, հոգեւոր ու մշակութային աշխատանքին գիտակից ու համակիր հայեր, բարեկամներ, միակամ ու միասիրտ կու գան բերել մեծարանքի եւ յարգանքի տուրքը իրենց հոգիին, ոգեկոչել եւ յարգել յիշատակը պատմական այս անմոռանալի օրուան՝ 250 ամեակը մահուան Մխիթարեան Մեծ Ընտանիքի հօր եւ Հիմնադրին, համոզուած որ բոլորիս աչքերը պիտի լեցուին յուզումով, նոր լոյսի եւ յոյսի շողերով, պիտի պայծառանան սրտերը բոլորին՝ Երանաշնորհ Մխիթարի տեսիլքի շողերով ու գաղափարականով:

Մենք բոլորս գիտակից ենք որ իսկական հերոսները, երկնային եւ աստուածատուր շնորհքներով լիացած ու սրբացած հոգիները, կը մնան վեր միջոցէ ու ժամանակէ. տարիները կ'անցնին, բայց անոնց հոգին կը շարունակէ ապրիլ ու ճառագայթել, լուսատրելով ճամբան, յաջորդող սերունդներուն:

Մխիթար Աբբահայր, մին այդ Սուրբերէն ու հերոսներէն, պատանեկան տարիքէն սկսեալ, իր սրտին սիրոյ անվառ խունկին բոյրը գիտցաւ բարձրացնել Աստուծոյ, իր մտքին անսպառ լոյսով՝ գիտցաւ լիանալ հոգեկան, գիտական, մշակութային եւ ընկերային իսկական արժէքներով, այս բոլորը սիրայօժար ու մեծ համոզումով գիտցաւ տրամադրել «ի լուսատրութիւն Ազգիս մերոյ Հայկազնոյ», առանց խտրականութեան ոգիի:

Հակառակ փոթորկոտ, անկայուն ու դժուարին օրերուն, ան գիտցաւ քալել ժամանակատրէն դէպի անժամանակը. գիտցաւ առաջնորդել, իր սրտին մօտիկ, Հայ ազգին գաւակները, մութ ու մշուշոտ շրջապատէն դէպի նոր արշալոյսներ, դէպի վերածնունդ, դէպի ապագայ:

Ան չեղաւ միայն ռահվիրայ մը, ազգային մշակոյթի արժէքներով, այլ եղաւ սրբակերտողը իր անձին, ընդհանրական մարդկային եւ գերմարդկային արժէքներով, իսկական Հայ Բրիստոնէայ եւ սրբակրօն վանականը եւ դաստիարակ մտատրականը:

Ընդունուած վարկած է որ յաճախ մարդ ենթակայ է, պտուղը իր միջավայրին ու շրջապատին ուր կ'ապրի. կամայ կամ ակամայ կ'ենթարկուի նոյն ժամանակի կրօնական, մշակութային եւ ընկերային ըմբռնողութեան եւ արժէքներուն, պարտադրուած շնչելու զինք շրջապատող օդը:

Միայն բնածին հանճարներն են, ապագայի իսկական հերոսները, որոնք գիտեն քանդել զիրենք կաշկանդող ընկերային եւ մշակութային պարիսպները, փշրել շղթաները ունակութիւններու, սովորութիւններու, ջանալով փնտռել ու գտնել նոր ճամբաներ, նոր հորիզոններ:

Որքան վառ են ցուբերը այդ հանճարին, որքան մտային եւ հոգեկան խտացուած ուժականութիւն կայ այդ հանճարեղ անհատի, իմացական եւ հոգեկան աշխարհին մէջ, այնքան մեծ է երաշխիքը յաջողութեան, փոխանցելու յաջորդող սերունդներուն նոր խոյանք, նոր ու պայծառ հեռանկար:

Իրապէս, Մխիթարի անձը, իր երիտասարդ տարիքէն, խիզախօրէն սկսած ու առաջ տարած գործունէութիւնը՝ հոգեւորական եւ մտատրական, կը մնան մարդկօրէն անբացատրելի, չըսելու համար անկարելի, եթէ չարժանանար աստուածային նախախնամութեան բացառիկ շնորհքին, եթէ Սեւանի Տիրամօր տեսիլքին «Եղիցի»-ն չուսատրեր ճամբան իր ապագային, չառաջնորդէր իր քայլերը, եթէ չտար ոյժը հոգեկան, յաղթելու օրը օրին ներկայացող դժուարութիւններուն, մարդկօրէն անկարելին՝ դարձնելու կարելի:

Մխիթար պայքարեցաւ խիզախօրէն եւ աննկուն կամբով, բանալու՝ իր բազմաչարչար ու մեկուսացած ժողովուրդին առջեւ, ճամբայ մը վերանորոգումի, լուսատրուած հոգեկան, մշակութային եւ կրօնական արժէքներով, մասնակից դարձնելու մեր ազգը ազատ ժողովուրդներու արժէքներուն:

Այս 250 ամեակին նուիրուած հանդիսութիւնները, գեղարուեստական եւ մշակութային յայտագիրներով, ձօն մըն են յարգանքի, մեծարանքի եւ հիացմունքի՝ հանդէպ Մխիթար Աբբահօր, ոչ միայն իր մտատրականութեան եւ հոգեւորականութեան արժէքներուն, այլ նաեւ վկայութիւնն է այն սիրոյն որ ունէր ան՝ հանդէպ հայ երգին, հայ շարականին, առհասարակ վկայութիւն մը իր երաժշտական ապրումներուն:

Այս պահուս, երբ կը թրթռան մեր բոլորիս սրտին լարերը հայկական ներդաշնակ մեղեդիներով, վստահ եմ միաժամանակ որ Մեծն Մխիթարի հոգիէն շող մը, նշոյլ մըն է որ կը ցուլայ մեր բոլորին սրտերէն ներս:

Իրապէս, հակառակ որ երկուքովէս դար է որ ան բաժնուած է մեզմէ եւ իր մարմինը կը հանգչի Ս. Ղազարի Աագ խորանին առջեւ՝ հնայելով շարքերը ովստաւորներու, բայց իր հոգին ու գաղափարականը կը մնան վառ ու կենդանի, այնքան ատեն որ կ'ապրի ու կը շարունակէ իր առաքելութիւնը՝ իր հիմնած Մխիթարեան Միաբանութիւնը՝ սնած ու մեծցած իր հոգիով ու գաղափարականով, այնքան ատեն որ կան ու կ'ապրին գիտակից ու իսկական Հայեր՝ միշտ կառչած իրենց նախնիքներու, իրենց անցեալի հոգեւոր եւ մշակութային արժէքներուն:

Ժամանակին, Տ. Ղեւոնդ Ալիշան, խօսելով Մխիթար Աբբահօր մասին, շատ իմաստուն կերպով կ'անդրադառնար թէ Մեծն Մխիթար իր կեանքին նպատակ ըրած էր «գոյուցութեամբ եւ անսայթաք մահացու կեանքը՝ փոխել յանմահութիւն», որովհետեւ «մահ իմացեալ՝ անմահութիւն է ...»:

Օրինեալ ըլլայ յիշատակը Մեծն Մխիթարի...

Յաջող ու երջանիկ ապագայ՝ Լիբանանահայ մեր աննման գաղութին:

Տ. Վարդան Վրդ. Բէշիշեան
Ընդհ. Աբբահայր
Մխիթարեան Միաբանութեան

Մ Խ Ի Թ Ա Ր Ա Բ Բ Ա Հ Ա Յ Ր

(1676-1749)

(կեանքն ու գործը)

Մխիթար Աբբահայր, ծնած է Սեբաստիա 1676ին, երբ Հայաստանի մեծ մասը եւ ժողովուրդը կ'ապրէր դժուարին օրեր: Տակաւին շատ փոքրիկ ստացաւ կրօնական դաստիարակութիւն: Բարձրագոյն ուսման անյազ ծարաւով շրջեցաւ Էջմիածնի, Սեւանի ու Բասենի վանքերը, ուր յուսալսար չգտաւ իր ակնկալածը: Պատանի տարիքէն Ս. Նշան վանքին մէջ նուիրուեցաւ անխոնջ ընթերցումի եւ ինքնագարգացման: Զսան տարեկանին, հազիւ քսհանայ ձեռնադրուած՝ ակնաստեւ Հայաստանի նիւթական եւ իմացական տխուր վիճակին, կը յղանայ աշակերտներ հաւաքելու եւ Միաբանութիւն մը հիմնելու գաղափարը, հաւաքաբար աշխատելու՝ Հայ ժողովուրդին հոգեւոր, բարոյական եւ իմացական մակարդակը բարձրացնելու համար:

Մեծ խորհուրդ, գեղեցիկ ծրագիր, բայց իրագործումը այդ օրերուն՝ շատ դժուար:

1700ին, ինը աշակերտներէ շրջապատուած, դրաւ հիմը իր երազած հաստատութեան, որ յաջորդաբար իր ամունով ալ պիտի կոչուէր Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Մ Ի Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն:

Հալածուած ազգակիցներէ իր կրօնական եւ ազգային հաշտարար համոզումներու պատճառով, կ'ապաստանի նախ Մեթոն (Յունաստան) եւ ապա 1715ին վերջնականապէս կ'անցնի Վենետիկ: Անձնական ճիգերով եւ բարեկամներու օգնութեամբ՝ օրուան իշխանութիւններէն սեփականութիւն կը ստանայ Ս. Ղազար կղզին: Պաշտօնապէս հոն կը հաստատուի 8 Սեպտեմբեր 1717ին, տասնվեց միաբաններով:

Այդ թուականէն սկսեալ, ամայի կղզին կը դառնար օրրանը հայ մշակոյթին, ամէնէն կենսունակ կեդրոնը ԺԸ.րդ դարու Հայկական Վերածնունդին:

Մխիթարի կեանքը մէկ նպատակ ունեցաւ. հասցնել պատրաստուած վարդապետներ մտաւոր լոյս եւ գիտութիւն սփռելու համար Հայ ժողովուրդին:

Իր բովանդակ կեանքը նուիրեց իր ժողովուրդի լուսատրութեան սրբազան գործին, տոգորուած այնպիսի բարոյական կորովով մը՝ որ չի՛ գիտեր կանգ առնել խոչընդոտներու դիմաց:

Ան խորունկ հաւատքի, բացառիկ կամքի, հզօր եւ խորաթափանց մտքի տէր անձնատրութիւն մըն էր, օժտուած իմացական ու հոգեկան արտակարգ ձիրքերով:

Անհուն խանդավառութեամբ լուծուեցաւ ծանր ու յարատեւ աշխատանքի՝ շինարարական, կրօնական եւ ուսումնական մարզերու մէջ:

Մխիթարի գրական արտադրութիւնը կը կազմեն շուրջ քսան հրատարակութիւններ, որոնց մէջ ամէնէն ակներեսն է «Հայկազեան Բառարան»ը, որ լոյս տեսած է 1749ին, իր մահէն երեք շաբաթ յետոյ: Մխիթարի մեծագոյն արժանիքներէն մին: Ընդարձակ գործ եւ դժուարին ձեռնարկ մը, որ դարձաւ հիմնաքարը եւ փրկութիւնը մեր լեզուին:

Յ Ա Յ Տ Ա Գ Ի Ր

1. Լիբանանի Քայլերգ

2. Հայաստանի Քայլերգ

3. Բացման խօսք

4. Օրուան խորհուրդը

5. Հառուն Հառուն

Մեներգո՛ղ՝ Թալին Քէշիշեան
Դաշնակահարուհի՝ Արփի Քէշիշեան

6. Երանուիի Մարիամ

Մեներգո՛ղ՝ Թալին Քէշիշեան
Դաշնակահարուհի՝ Արփի Քէշիշեան

7. Մխիթար Արքայազնի դամբանին վրայ
(Որդիական ուղերձ)

Ընթերցում՝
Արփի Բարդիեան

8. Սայլն այն իջաներ

Թաւ շուի
Մենակատար՝ Չաքար Քէշիշեան

9. Յորժամ

Թաւ շուի՝ Չաքար Քէշիշեան
Դաշնամուրի ընկերակցութիւն՝
Մարօ Եսայեան

Հ. Գրիգորիս Վրդ. Սերէնեան

բանախօս՝
Հ. Վահան Վրդ. Օհանեան

Խօսք՝ Գրիգոր Նարեկացի
Դաշնատրում՝ Ռ. Աթայեան

Խօսք եւ երաժշտութիւն՝
Մխիթար Արքայազն
Դաշնատրում՝ Անթոնիոյ Չէչէ

Գրիգոր Նարեկացի

մշակում՝ Առնօ Բարաշանեան

«Կռունկ Երգչախումբ»

Ղեկավար՝ Եղուարդ Թորիկեան
Դաշնամուրի Ընկերակցութիւն՝ Լենա Եոզկաթլեան Նահապետ

10. Աղաչեմք Ձքեզ

Խօսք եւ երաժշտութիւն՝
Մխիթար Արքայազն

11. Երգ առ Ս. Անտոն Արքայ

Խօսք եւ երաժշտութիւն՝
Մխիթար Արքայազն
Դաշնատրում՝ Ա. Պրատի

12. Անճառին Խորան

Խօսք եւ երաժշտութիւն՝
Մխիթար Արքայազն
Դաշնատրում՝
Եղուարդ Թորիկեան

13. Երգ առ Մխիթար

Երաժշտութիւն
եւ Դաշնատրում՝
Ա. Փոնցիլարուա

Մեներգո՛ղ՝ Աւետիս Ագրապեան

14. Իմ Հեռաւոր Հայրենիք

Խօսք՝
Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեան
Երաժշտ. Գուրգէն Ալեմշահ

15. Ով Անդրանիկ Համայնից

Խօսք՝
Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեան
Երաժշտ. Գուրգէն Ալեմշահ
Բազմաձայն Դաշնատրում՝
Եղուարդ Թորիկեան

16. Փակման Խօսք

Գերած. Վարդան Եպս. Ազգարեան

Սակայն ամենամեծ նորությունը իր հրատարակություններուն մէջ որ ամենամեծ նորութեան պէս ողջունուեցաւ, բանալով դարագլուխ մը, եղաւ «Աստուածաշունչ»ը, որ գեղարուեստական ճաշակով եւ համաձայն ժամանակի բոլոր պահանջներուն՝ կու գար տպագրական մեծագոյն յաջողութիւնն ունենալու: Այս գործին համար ոչինչ խնայուած էր, ծախս եւ աշխատանք միացած էին կատարեալ ընելու համար զայն, ընտիր թուղթի վրայ փորագրուած պատկերներով, ծաղկագիրներով:

Ասոնց կողքին ունի նաեւ լեզուական, մեկնողական եւ քերթողական գործեր:

Մխիթար իբրեւ միտք եւ կարողութիւն հանճարեղ յայտնութիւն մըն է ինքնաշխատութեամբ հասած զարգացման բարձրագոյն աստիճաններուն, իմացականութիւն մը, որ մեր մէջ մտցուց գիտութեան սէրը:

Մխիթար իր աշխատանքով եղաւ ո՛չ միայն հիմնադիր կրօնական հաստատութեան մը, այլ վերաստեղծող մը գրական, մշակութային, կրթական եւ ուսումնական այնպիսի շարժումի մը, որ միշտ աւելի զարգացաւ ու ծաւալեցաւ եւ 1800-ական թուականներէն սկսեալ՝ գործնականապէս յաջողեցաւ ներշնչել ազգային ուժեղ ոգի, գիտակցութիւն, սէր՝ ազգային պատմական եւ մշակութային գանձերուն հանդէպ, հաւատք՝ նոր դարաշրջան մը սկզբնատրելու՝ մտատր եւ գրական կեանքի ծաղկումով:

Իր հրատարակած Աստուածաշունչի վերջաբանին մէջ՝ որպէս կտակ կ'աւանդէ կրօնքի եւ ազգասիրութեան երկու անշփոթ զաղափարներու վարդապետութիւնը՝ առանց մէկը միւսին զոհելու. այդ իր տուած ուղղութիւնը՝ եղաւ նկարագիրը իր աշակերտներուն:

Կրօնական ու մշակութային կեանքի մը վերանորոգումին, եւ ատոր հասնելու լուսատր ծրագրի մը յղացումին մէջ հետեւաբար հարկ է տեսնել անոր բուն արժէքը, եւ մանաւանդ այն ապառաժեայ կամքին մէջ՝ որ գիտցաւ ստեղծել գրական շարժումի կեդրոն մը եւ տալ անոր անհրաժեշտ մղումը՝ որպէսզի իր յաջորդները կատարելագործեն իր ձեռնարկները եւ տան անոնց հաստատութիւն ու բեղմնատր կեանք:

Մխիթար եղաւ որ առաջին անգամ, յետ անկումի դարերուն, ներարկեց մեր մէջ կրօնքի, հայրենիքի, ճշմարտութեան եւ արուեստի զաղափարները, փոխեց մեր մտայնութիւնը, փարատեց հայ մտքի հորիզոնին թանձր խաւարը՝ բանալով նոր աշխարհի մը լոյսի, գիտութեան եւ կեանքի:

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ն Ե Ր ՈՒ Մ Շ Ա Կ ՈՒ Թ Ա Յ Ի Ն Գ ՈՐ Ծ ՈՒ Ն Է ՈՒ Թ Ի Ի Ն Ը

Մխիթարի օրինակին հաւատարմօրէն հետեւեցան իր հաստատութեան անդամագրուող միաբանները, ջանալով իրագործել անոր զաղափարականը եւ կատարելագործել ընդհանուր ծրագիրը հետեւողական կերպով: Այսինքն, ուսումնասիրել ու ծանօթացնել Հայ ժողովուրդին՝ իր պատմական, եկեղեցական, գրական, գիտական ու մշակութային արժէքները դարերու ընթացքին:

Այս բացայայտ աշխատանքին դիմաց է որ ԺԹ. դարու Զարթօնք-

Վերածնունդը անընթացի կը դառնայ առանց Մխիթարեաններու:

Մխիթար եւ իր յաջորդները ծրագրուած աշխատանքով՝ տարիներու ընթացքին հաւաքած են հայկական ընտիր ձեռագիրներ, փրկելով զանոնք կորուստէ: Այսօր Մխիթարեան Մատենադարանը ունի շուրջ 5000 ձեռագիրներու ձոյն հաւաքածոյ մը մեծարժէք ու բացառիկ կարեւորութեամբ:

Ս. Ղազար հեռու գտնուելով աշխարհակործան աղէտներէ, դարերու ընթացքին, համբերատար ու գուրգուրոտ խնամքով հաւաքած է Սփիւքէն ու Մայր Հայրենիքէն հայ տպագրութիւններ, կազմելով ձոյն գրադարան մը, տասնեակ հազար հատորներով, հայկական եւ երոպական լեզուներով, ինչպէս նաեւ ամսաթերթեր ու հազուագիւտ հին հայ լրագիրներ:

Մայրավանքի հարուստ թանգարանին մէջ կը պահուին անգնահատելի գանձեր. անոր ցուցափեղկերուն մէջ արդար հպարտութեամբ ցուցադրուած են հայկական հին դրամներ, գորգեր, յախճապակիներ, արծաթագործութեան եւ սրբազան արուեստի ցուցանմոյշներ, հայկական տարագներ:

250 տարիներէ ի վեր Մխիթարեան մամուլը եւ հրատարակչատունը կը շարունակեն աշխատիլ՝ գիտակից իրենց դերին ու պաշտօնին եւ մինչեւ այսօր, Վենետիկի Մխիթարեան հրատարակութիւններուն թիւը կը հաշուէ հազարատր հատորներ, առանց նկատի առնելու Մխիթարեան պարբերական մամուլը:

Ս. Ղազարի տպարանէն լոյս կը տեսնէ հրատարակութիւններու երկար շարք մը, կազմելով Հայ դասական Հեղինակներու հաւաքածոն (գրաբար լեզուով):

Կը յաջորդեն պատմաբանասիրական ուսումնասիրութիւններ: Կը վերակառուցուի Հայկական ամբողջական պատմութիւնը եւ գրականութիւնը. կը մաքրագործուի խեղաթիւրուած Դասական Հայերէն լեզուն (գրաբարը) յարմար քերականութիւններով եւ հետազօտական ուսումնասիրութիւններով:

Հայերէնի կը թարգմանուին յունական եւ լատինական, իտալական, ֆրանսական, գերմանական ու անգլիական գրականութիւններու կարեւորագոյն գործերը: Եւ դեռ, ծաւալուն գրադարան մըն ալ՝ միջազգային ժամանակակից գրական գլուխ-գործոցներու թարգմանութիւններ:

Արուեստի գիծով կատարուած հրատարակութիւններուն մէջ կարելի է յիշել «Գեղունի»ներու բացառիկ շարքը, ինչպէս նաեւ «Հայկական Մանրանկարչութիւն»ը մեծի, հոյակապ, գիտական եւ չորս անջատ լեզուներով կատարուած գեղարուեստական հատորը:

1784ին առաջին անգամ ըլլալով Հայ ազգը կ'ունենայ իր ամբողջական Պատմութիւնը շնորհիւ Ս. Միքայէլ Զամբանի եռահատոր հրատարակութեան, որ քաղելով իր ծանօթութիւնները հայ եւ օտար բոլոր աղբիւրներէ, հինը կը դնէ Հայկական քննական պատմագրութեան:

Արուեստագէտ վարդապետներ կը սկսին փորագրել հայկական քարտէսներ, պատկերագրող գիրքեր, հրատարակել արուեստի գործեր, հայ պատմական վայրերու, յուշարձաններու նկարներ, վերարծարծելու համար հայ հողին եւ Հայ Մշակութիւն սէրը հոգիներուն մէջ:

Հայ թատերական շարժումն այլ շնորհիւ Մխիթարեան աշակերտներու կը սկսի ընդհանրանալ ժԹ. դարուն եւ կը ծաալի հայ գաղութներու մէջ:

1836-1837-ին հրապարակ կ'իջնէ «Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի» երկհատոր բառարանը, որ տակափն մինչեւ այսօր այլ անգերագանցելի կը մնայ, իբրեւ ամենէն ընդարձակ եւ անփոխարինելի բառարանը. միակը իր տեսակին մէջ եւ փառքը հայկաբանութեան:

Առաջին անգամ ըլլալով ժողովրդական հայերէնը՝ աշխարհաբարը կը դառնայ գրական լեզու, մուտք գործելով հայ իրականութեան մէջ, **ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ** եւ **ԵՂԱՆԱԿ ԲԻԻԶԱՆԴԵԱՆ** պարբերականներու հրատարակութիւններով:

Նափուլուն Ա. Պոնափարթ ճանչնալով Մխիթարեաններու իմացական գործունէութեան բացառիկ երեւոյթը, 1810-ին կայսերական յատուկ հրամանագիրով, Վենետիկի Մխիթարեան Մայրավանքը նկատեց իբրեւ **Ակադեմական Հաստատութիւն**: Հայ անուանի գիտնականներու կողքին, Երոսպացի մեծ հայագէտ գիտնականներ այլ մաս կազմեցին անոր, իբրեւ անդամներ:

Ս. Ղազարի Հայկական Ակադեմիան ունեցաւ իր պաշտօնաթերթը՝ «**Բազմավէպ**» ամսաթերթը, որ 1843էն սկսեալ, մինչեւ այսօր անընդհատ կը շարունակէ կատարել հայագիտական իր որակատր աշխատանքը:

Գրական գործունէութեան զուգընթաց, Մխիթարեան հայերը դպրոցական ցանցով մը կը պաշարեն հայ կարեւոր գաղութները, համոզուած ըլլալով թէ կրթութիւնը եւ մտքի լուսատրութիւնը կենսական բարիք մըն են նոր սերունդներու համար: Անոնք իրենց վարժարաններով՝ անգնահատելի դեր կատարած են անցեալին ու կը շարունակեն կատարել այսօր ազգապահպանումի խոր գիտակցութեամբ: Մխիթարեան վարժարաններէն ելան բազմաթիւ ազգային դէմքեր, գրագէտներ, բանաստեղծներ, արուեստագէտներ, քաղաքական անձնատրութիւններ:

Մխիթարեանները կարելի չէ ճանչնալ ու կարելի չէ գնահատել պէտք եղած ձեւով, եթէ մոռցուի անոնց **ՀԱՅ ՆԿԱՐԱԳԻՐԸ**:

Դատեցէ՛ք ինչպէս որ կ'ուզէք, գտէ՛ք անոնց գործին մէջ ամէն հնարատր թերութիւն, կոչեցէ՛ք զիրենք միակողմանի, բայց մէկ բան կարելի չէ ենթարկել կասկածի.- անոնց Հայութիւնը, կամ այսպէս կոչուած «**Մխիթարեան ազգայնականութիւնը**»: Մխիթարեան աշակերտ եւ Հայ արդի բանաստեղծութեան մեծագոյն ներկայացուցիչ՝ Դանիէլ Վարուժան պարծանքով կը յայտարարէ.- «Ըղեղս հպարտ կը զգայ ինքզինքը՝ հայարտութեամբը Մխիթարեան Իտէալին»:

Այսօր այլ Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը, հակառակ վերջին տարիներու կեանքի զանազան դժուարութիւններուն, կը շարունակէ իր սրբազան առաքելութիւնը՝ քալելով իր հիմնադիրին գծած լուսաշափող ճանապարհին:

